ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> հուլիսի 2022թ. N ՄՈ/418-2022

ք. Արմավիր

«ԱՅԳԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Կարեն Մովսիսյանի 2022 թվականի հուլիսի 12-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Այգեվանի Մովսես Խորենացու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Մովսիսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2022 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 15-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Կարեն Մովսիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Այգեվանի Մովսես Խորենացու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Այգեվանի Մովսես Խորենացու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Սամվել Արսենյանին:
3. «Այգեվանի Մովսես Խորենացու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Սամվել Արսենյանի աշխատավարձի վճարումը 2022 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 15-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Կարեն Մովսիսյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի օգոստոսի 16-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

13.07.2022

X

VERIFIED OCSP 13.07.2022 17:31:02 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ